



## **ՈՐՈՇՈՒՄ N 36**

22 հունվարի 2019 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
2019 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտոր Արամ Հրաչիկի Սիմոնյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ռեկտորին 2019 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:


**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝**

**Գ. Մուրադյան**

Հավելված  
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի  
2019 թ. հունվարի 22-ի նիստում  
ընդունված N 36 որոշման  
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Գ. Ա. Մուրադյան \_\_\_\_\_

## ՆԱԽԱՅԱՇԻՎ



**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
2019 Թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ**



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն-----	5
2. 2019 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ -----	19
3. 2018 և 2019 թթ. եկամուտների և ծախսերի համեմատական վերլուծություն -----	43
4. 2019 թ. ծրագրեր և միջոցառումներ -----	68
5. 2019 թ. ծախսերը՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների -----	89
6. Իջևանի մասնաճյուղի 2019 թ. ֆինանսավորումը պետական բյուջեից բարձրագույն կրթության ծրագրով -----	97
7. Առանձին կառուցվածքային ստորաբաժանումների 2019 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ-----	99
8. Լրացուցիչ կրթական ծառայությունների 2018-2019 ուստարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվ-----	103



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուհի կառավարման կարևորագույն գործառնություններից է դրամական հոսքերի պլանավորումը: Եկամուտների և ծախսերի նախահաշիվը նպատակային ծրագրերի իրականացման և կազմակերպության զարգացման համար դրամական հոսքերի արտահայտումն է:

ԵՊՀ 2019 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի պատրաստման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- Անընդհատություն, երբ գնահատվում է կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը:
- Հետևողականություն, երբ հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը պահպանվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, որոնք հանգեցնելու են ավելի պատշաճ ներկայացմանը:
- Էականություն և միավորում, երբ յուրաքանչյուր էական հոդված ներկայացվում է առանձին, իսկ ոչ էական հոդվածները միավորվում են համանման բնույթի կամ գործառնության հոդվածների հետ:
- Համադրելիություն, երբ վիճակագրական ողջ տեղեկատվությամբ բացահայտվում է նախորդ ժամանակաշրջանին վերաբերող համադրելի տեղեկատվությունը:
- Նախահաշվի հոդվածների ճկունություն:
- Բուհի ֆինանսատնտեսական գործառնությունների պլանավորում:
- Ռեսուրսների բաշխման օպտիմալացում:

Նախահաշվի հոդվածների ցուցանիշները կազմվել են նախորդ տարվա նախահաշվի կատարողական ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և պլանավորման հիման վրա: Նախահաշվի հոդվածներն արտահայտված են ՀՀ դրամով, չափի միավորը՝ հազար դրամ՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

Գործառնությունների արտարժույթային հոսքերը նախահաշվում հաշվարկվել են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով դրամի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2018 թ. դեկտեմբերի 4-ին սահմանված արտարժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:

ԵՊՀ նախահաշվի եկամուտների և ծախսերի հոդվածների միջոցների չափը և բաշխումներն ի գիտություն են ընդունվել ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

***Նախահաշվի եկամուտները կազմված են.***

1. Գործառնական գործունեությունից ստացվող եկամուտներից,
  - այդ թվում`
    - 1.1. Վճարովի ուսուցման ծառայության գումարներից,
      - այդ թվում`
        - 1.1.1. Առկա ուսուցման բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի վճարովի ուսուցման ծառայության գումարներից,
        - 1.1.2. Հեռակա ուսուցման ծառայության գումարներից:
      - 1.2. Պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից,
        - այդ թվում`
          - 1.2.1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գումարներից,
            - այդ թվում`
              - 1.2.1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձրագույն կրթական ծառայության գումարներից,
              - 1.2.2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության գումարներից,
                - այդ թվում`
                  - 1.2.2.1. Դրամաշնորհային (թեմատիկ) աշխատանքների, բազային լաբորատորիաների և միջազգային համագործակցության ծրագրերի գումարներից,
                  - 1.2.2.2. Գիտաշխատողների բարձր արդյունավետության և գիտական աստիճանների համար նախատեսված ծրագրերի գումարներից,
                  - 1.2.2.3. Գիտական գործուղումների, գիտաժողովների կազմակերպման ծրագրերի գումարներից,
                  - 1.2.2.4. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման գումարներից,
                - 1.2.3. Այլ գործունեությունից,
                  - այդ թվում`
                    - 1.2.3.1. Պրահայի և Բուխարեստի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման ծրագրերի գումարներից,
                    - 1.2.3.2. Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման նպատակով տրամադրված նպաստներից,
                    - 1.2.3.3. «Կիրառական հետազոտություններ» ծրագրերի գումարներից:
        2. ԵՊՀ կանոնադրությամբ թույլատրված գործառնական այլ եկամուտներից,

այդ թվում՝

- 2.1. Լրացուցիչ կրթական ծրագրերի եկամուտներից,
- 2.2. Ուսումնաարտադրական բազաների եկամուտներից,
- 2.3. Հյուրերի տան եկամուտներից,
- 2.4. Ատամնաբուժարանի ծառայությունների եկամուտներից,
- 2.5. Վարձակալության եկամուտներից,
- 2.6. Մարզասրահի եկամուտներից,
- 2.7. Ընդունելության քննությունների կազմակերպման եկամուտներից,
- 2.8. Փաստաթղթերի ձևակերպումների եկամուտներից,
- 2.9. Քննությունների կազմակերպման եկամուտներից,
- 2.10. Այլ եկամուտներից,

այդ թվում՝

- 2.10.1. Դուրս գրված գույքի օտարումներից,
  - 2.10.2. Հանրակացարանային ծառայություններից:
3. Ոչ գործառնական եկամուտներից,

այդ թվում՝

- 3.1. Դրամաշնորհային ծրագրերի եկամուտներից,
- 3.2. Դրամական միջոցները բանկում որպես ավանդ ձևակերպված գումարներից ստացվող տոկոսներից,
- 3.3. Բարեգործական միջոցներից:

### ***Նախահաշվի ծախսերը կազմված են.***

#### **Ա. Ընթացիկ ծախսերից,**

այդ թվում՝

1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից (ԱՎՈՒՄ) և դրան հավասարեցված վճարումներից՝ ներառյալ ֆիզիկական անձանցից պահվող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը և վճարները,  
այդ թվում՝

- 1.1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծախսերից,
- 1.2. Ժամավճարային հիմունքով վճարվող դասախոսական անձնակազմի ծախսերից,
- 1.3. Հեռակա ուսուցման եկամուտներից պրոֆեսորադասախոսական և այլ անձնակազմի աշխատողներին՝ հավելավճարների ծախսերից,



- 1.4. Գիտակրթական գործունեության համար՝ լրավճարի ծախսերից,
- 1.5. Վարչական անձնակազմի ծախսերից,
- 1.6. Ուսումնաօժանդակ անձնակազմի ծախսերից,
- 1.7. Սպասարկող և այլ անձնակազմի ծախսերից,
- 1.8. Գիտական գործունեության անձնակազմի ծախսերից,
- 1.9. Դրամաշնորհային ծրագրի և լրացուցիչ կրթական ծառայությունների անձնակազմի ծախսերից,
- 1.10. Պայմանագրային (միանվագ) աշխատանքների վարձատրության ծախսերից,
- 1.11. Հաշմանդամության կարգ ունեցող ԵՊՀ աշխատողներին՝ հավելավճարների ծախսերից,
- 1.12. Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսերից:
- 2. Կրթաթոշակի ծախսերից,  
այդ թվում՝
  - 2.1. Բակալավրիատի ուսանողների կրթաթոշակի ծախսերից,
  - 2.2. Մագիստրատուրայի ուսանողների կրթաթոշակի ծախսերից,
  - 2.3. Ասպիրանտական կրթաթոշակի ծախսերից,
  - 2.4. Անվանական կրթաթոշակի ծախսերից,
  - 2.5. Դրամաշնորհային ծրագրերի կրթաթոշակի ծախսերից:
- 3. Պետական բյուջե վճարումներից,  
այդ թվում՝
  - 3.1. Շահութահարկից,
  - 3.2. Ավելացված արժեքի հարկից,
  - 3.3. Այլ հարկերից, տուրքերից և պարտադիր վճարներից:
- 4. Կոմունալ վճարների ծախսերից,  
այդ թվում՝
  - 4.1. Էլեկտրաէներգիայի ծախսերից,
  - 4.2. Գազի ծախսերից,
  - 4.3. Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերից,
  - 4.4. Կոմունալ այլ ծախսերից:
- 5. Փոստի և կապի վճարների ծախսերից,  
այդ թվում՝
  - 5.1. Հեռախոսակապի ծախսերից,

- 5.2.** Ինտերնետ կապի ծախսերից,
- 5.3.** Փոստային ծախսերից:
- 6.** Գրասենյակային ծախսերից,  
այդ թվում`
  - 6.1.** Գրենական պիտույքների ծախսերից,
  - 6.2.** Քարթրիջների և դրանց լիցքավորման ծախսերից:
- 7.** Ապրանքանյութական պաշարների ծախսերից,  
այդ թվում`
  - 7.1.** Շինանյութերի,
  - 7.2.** Տնտեսական ապրանքների,
  - 7.3.** Սննդային ապրանքների,
  - 7.4.** Համակարգչային պարագաների,
  - 7.5.** Լամպերի և լուսարձակների,
  - 7.6.** Տպագրական նյութերի,
  - 7.7.** Փափուկ գուլքի,
  - 7.8.** Քիմիական և լաբորատոր նյութերի,
  - 7.9.** Մարզական գուլքի,
  - 7.10.** Դեղորայքի,
  - 7.11.** Գործիքների,
  - 7.12.** Այլ ապրանքների:
- 8.** Տրանսպորտային ծախսերից,  
այդ թվում`
  - 8.1.** Վառելիքի և քսայուղի ծախսերից,
  - 8.2.** Ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի ծախսերից,
  - 8.3.** Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսերից:
- 9.** Ծառայությունների ձեռքբերման ծախսերից,  
այդ թվում`
  - 9.1.** Տպագրական ծառայություններից,
  - 9.2.** Գուլքի նորոգման և սպասարկման ծառայություններից,
  - 9.3.** Ցուցանակների պատրաստման ծառայություններից,
  - 9.4.** Գովազդի ծառայություններից,
  - 9.5.** Որակավորման բարձրացման դասընթացների ծառայություններից,
  - 9.6.** Փաստաթղթերի արխիվացման ծառայություններից,

- 9.7.** Ասպիրանտուրայի դիմորդների դասընթացների և քննությունների կազմակերպման ծառայություններից,
- 9.8.** Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններից,
- 9.9.** Աշխատողների առողջության ապահովագրության ծառայություններից,
- 9.10.** Տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայություններից,
- 9.11.** Մասնագիտացված կազմակերպություններում արտադրական պրակտիկայի կազմակերպման ծառայություններից,
- 9.12.** Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հյուրասիրությունների կազմակերպման ծառայություններից,
- 9.13.** Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններից,
- 9.14.** Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններից,
- 9.15.** Բանկային և մաքսային ձևակերպումների ծառայություններից,
- 9.16.** Տեսանյութերի, ֆիլմերի նկարահանման և մոնտաժման ծառայություններից,
- 9.17.** Սանմաքրման ծառայություններից,
- 9.18.** Անվտանգության պահպանման ծառայություններից,
- 9.19.** Այլ ծառայություններից:
- 10.** Ներկայացուցչական ծախսեր,
- 11.** Անդամավճարային ծախսերից,
- 12.** Վարձակալության ծախսերից,  
այդ թվում`
- 12.1.** Սրահների և հյուրատների վարձակալության ծախսերից,
- 12.2.** Տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալության ծախսերից:
- 13.** Գործուղման ծախսերից,  
այդ թվում`
- 13.1.** Ֆակուլտետների, կենտրոնների, ինստիտուտի և համահամալսարանական ամբիոնների գործուղման ծախսերից,
- 13.2.** Վարչական և այլ անձնակազմի գործուղման ծախսերից,
- 13.3.** Միջազգային օլիմպիադաների մասնակցության, արշավների և ուսանողական այլ գործուղումների ծախսերից,

- 13.4.** ԵՏՄ անդամ պետությունների համալսարանների (Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգի, Բելգորոդի) և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ուսուցման, միջազգային համագործակցության խթանման ուղղված գործուղումների ծախսերից,
- 13.5.** Գիտական գործունեությամբ նախատեսված գործուղման ծախսերից,
- 13.6.** Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսերից:
- 14.** Նպատակային ֆինանսավորումների ծախսերից,  
այդ թվում`
- 14.1.** Համաֆինանսավորման ծախսերից,
- 14.2.** Գործընկեր կազմակերպություններին ֆինանսավորումից:
- 15.** Գրադարանային ծախսերից,  
այդ թվում`
- 15.1.** Թերթերի և ամսագրերի բաժանորդագրման ծախսերից,
- 15.2.** Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրման ծախսերից,
- 15.3.** ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված գրքերի ձեռքբերման ծախսերից,
- 15.4.** Այլ հեղինակներից գրքերի ձեռքբերման ծախսերից:
- 16.** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսերից,  
այդ թվում`
- 16.1.** Ուսանողական նպաստների ծախսերից,
- 16.2.** «Պատիվ ունեն» ծրագրին մասնակից և արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցման ծախսերից,
- 16.3.** Սոցիալապես անապահով և սահմանամերձ բնակավայրերի ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման ծախսերից,
- 16.4.** Կրթաթոշակի ծախսերից:
- 17.** Այլ ծախսերից (շահույթի բաշխման ծախսերից),  
այդ թվում`
- 17.1.** Հայաստան համահայկական հիմնադրամի հետ համագործակցության ծախսերից,
- 17.2.** «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ-ին ֆինանսական աջակցությունից,
- 17.3.** Բարեգործական ծախսերից,
- 17.4.** Մշակութային միջոցառումների տոմսերի ձեռքբերման ծախսերից,

**17.5.** 2016 թվականի ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին ֆինանսական աջակցության ծախսերից,

**17.6.** Պահուստային ֆոնդից,

**17.7.** Այլ ծախսերից:

**Բ. Ոչ ընթացիկ ծախսերից,**

այդ թվում՝

**18.** Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսերից,  
այդ թվում՝

**18.1.** Համակարգչային գույքի,

**18.2.** Լաբորատոր սարքավորումների,

**18.3.** Կահույքի,

**18.4.** Օդորակիչների,

**18.5.** Հակահրդեհային գույքի,

**18.6.** Հուշամեդալների և շքանշանների,

**18.7.** Ոչ նյութական այլ ակտիվների,

**18.8.** Կենցաղային գույքի,

**18.9.** Տպագրական սարքավորումների,

**18.10.** Տեսահսկման համակարգի,

**18.11.** Ոչ ընթացիկ այլ ակտիվների ծախսերից:

**19.** Շինարարական և հիմնանորոգման ծախսերից, որոնք կիրականացվեն՝

**19.1.** Ուսումնական մասնաշենքերում, լաբորատորիաներում, դահլիճներում և գրադարանում,

**19.2.** Գիտական լաբորատորիաներում,

**19.3.** Ընդհանուր օգտագործման տարածքներում:

ԵՊՀ գործառույթների բնույթից ելնելով՝ նախահաշվի որոշ հոդվածների բաշխումը կատարվում է հետևյալ ձևով.

**1.** Ըստ ռեկտորի հրամանների և կարգադրությունների,  
մասնավորապես՝

**1.1.** Ներկայացուցչական ծախսեր,

**1.2.** Անդամավճարներ,

**1.3.** Պահուստային ֆոնդ,

**1.4.** Այլ ծախսեր (կուտակված շահույթի բաշխում),

- 1.4. Կառուցվածքային ստորաբաժանումների ծախսեր:
2. Պրակտիկայի կազմակերպման ծախսերը կատարվում են ուսումնամեթոդական վարչության պրակտիկայի ղեկավարի և վարչության պետի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:
3. Գրադարանային ծախսերի բաշխումը կատարվում է գրադարանի տնօրենի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:
4. Տրանսպորտային ծախսերի բաշխումը կատարվում է ավտոպարկի վարիչի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
5. Շինարարական և հիմնանորոգման ծախսերի բաշխումը կատարվում է գլխավոր ինժեների և աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:
6. Պետական բյուջեից Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման նախահաշվի կազմումը կատարվում է մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:
7. Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաների, լաբորատորիաների և կենտրոնների նախահաշվի կազմումը կատարվում է համապատասխան ղեկավարների միջոցով, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:
8. ԵՊՀ առանձին կառուցվածքային ստորաբաժանումների եկամուտներ և ծախսեր.
  - 8.1. Ուսումնաարտադրական բազաների եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմումը կատարվում է տնօրենների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
  - 8.2. Ատաննաբուժարանի եկամուտների և ծախսերի նախահաշիվը կազմվում է ատաննաբուժարանի վարիչի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
  - 8.3. Լրացուցիչ կրթական ծրագրերի եկամուտների և ծախսերի նախահաշիվները կազմվում են համապատասխան ծրագրերի վարիչների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:
9. «Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր» հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.

- 9.1.** Շինանյութեր և տնտեսական ապրանքներ՝ մասնաշենքերի պարետների, գլխավոր ինժեների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.2.** Լամպեր և լուսարձակներ՝ տնտեսական մասի գլխավոր էներգետիկի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.3.** Տպագրական նյութեր՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.4.** Սննդային ապրանքներ՝ պրակտիկայի ղեկավարի և ուսումնաարտադրական բազաների տնօրենների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.5.** Մարզական գույք՝ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի վարիչի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.6.** Քիմիական, լաբորատոր նյութեր և պարագաներ՝ համապատասխան ֆակուլտետների և ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.7.** Փափուկ գույք՝ հյուրերի տան, ուսանողական հանրակացարանի, ուսումնաարտադրական բազաների տնօրենների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 9.8.** Դեղորայք՝ ատամնաբուժարանի վարիչի, բուժկետի պատասխանատուի, ուսումնաարտադրական բազաների տնօրենների միջոցով, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 10.** «Ծառայությունների ձեռքբերման ծախսեր» հոդվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.
- 10.1.** Փաստաթղթերի արխիվացման ծախսեր՝ արխիվի վարիչի միջոցով, ռեկտորի հաստատմամբ,
- 10.2.** Գույքի նորոգման և սպասարկման ծախսեր՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների միջոցով, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 10.3.** Ցուցանակների պատրաստման ծախսեր՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների միջոցով, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

- 10.4.** Ասպիրանտուրայի դիմորդների համար դասընթացների ծառայության ծախսեր՝ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 10.5.** Խորհրդատվական, որակավորման և վերապատրաստման ծառայությունների ծախսեր՝ ռեկտորի հաստատմամբ,
- 10.6.** Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններ՝ գլխավոր ինժեների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,
- 10.7.** Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններ՝ հակահրդեհային ծառայության պետի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 10.8.** Տեսանյութերի, ֆիլմերի նկարահանման և մոնտաժման ծառայություններ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,
- 10.9.** Ապահովագրական ծառայություններ՝ ռեկտորի աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,
- 10.10.** Հյուրասիրությունների կազմակերպման ծառայություններ՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,
- 10.11.** Անվտանգության պահպանման ծառայություններ՝ ռեկտորի աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,
- 10.12.** Սանմաքրման ծառայություններ՝ ռեկտորի աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:
- 11.** Ուսանողական միջոցառումների ծախսերը կատարվում են ԵՊՀ ուսանողական խորհրդի և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահների ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
- 12.** Մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են մշակույթի կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:



13. Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և միջոցառումների ծախսերը կատարվում են շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
14. Հասարակայնության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների ծախսերը կատարվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
15. Կրթական բարեփոխումների անցկացման ծախսերը կատարվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալների ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:
16. Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված ծախսերը կատարվում են ծրագրի ղեկավարի ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:
17. Գիտական և գիտատեխնիկական աշխատանքների գծով ծախսերը կատարվում են համապատասխան ծրագրերի և ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ:
18. Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման աշխատանքները կատարվում են տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետի ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ:
19. Գրահրատարակչական խորհրդի կողմից երաշխավորված գրքերի հրատարակման ծախսերը կատարվում են ԵՊՀ հրատարակչության տնօրենի ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:
20. Օլիմպիադաների կազմակերպման նպատակով ծախսերը կատարվում են մինչհամալսարանական կրթության վարչության պետի ներկայացմամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմամբ:

**21.** Ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների ծախսերը կատարվում են համապատասխան պատասխանատուների կողմից ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:

**22.** Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հողվածի միջոցների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ.

**22.1.** Համակարգչային գույք՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

**22.2.** Լաբորատոր սարքավորումներ՝ ֆակուլտետների ղեկանների և ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստատմամբ,

**22.3.** Կահույք՝ ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ,

**22.4.** Տպագրական սարքավորումներ՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

**22.5.** Հակահրդեհային գույք՝ հակահրդեհային ծառայության պետի ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

**22.6.** Կենցաղային գույք՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի հաստատմամբ,

**22.7.** Օդորակիչներ՝ ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ռեկտորի հաստատմամբ:

**23.** ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներ.

Նախահաշվի ծախսային հողվածների միջոցները բաշխվել են հետևյալ կերպ.

**23.1.** Ըստ ֆակուլտետների.

**23.1.1.** Գրասենյակային ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների ու պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի դրույքների թվի,

**23.1.2.** Գործուղման ծախսերը հատկացվում են ըստ պրոֆեսորադասախոսական կազմի դրույքների թվի,

**23.1.3.** Այլ ծախսերը հատկացվում են համամասնորեն՝ ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ համակազմի դրույքների և ուսանողների թվի,

**23.1.4.** Ծառայությունների ձեռքբերման ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի դրույքների թվի:

**23.2.** Ըստ կառուցվածքային այլ ստորաբաժանումների.

**23.2.1.** Գրասենյակային ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և դրույքների թվի,

**23.2.2.** Ծառայությունների ձեռքբերման ծախսերը հատկացվում են ըստ նախորդ տարվա կատարողականի արդյունքների և դրույքների թվի,

**23.3.** Ֆինանսական տարվա ընթացքում անձնակազմի հետագա փոփոխությունների դեպքում բերված ցուցանիշները ենթակա չեն փոփոխման:

**23.4.** Ստորաբաժանումների և ֆակուլտետների համար նախատեսված տարեկան ծախսերը (չափաբաժինները) կարելի է փոփոխել՝ ելնելով գործունեության բնույթից, ապագայում նախատեսվող ծրագրերից և նախորդ տարվա կատարողական ցուցանիշներից:

Յուրաքանչյուր տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման մասին ամբողջական հաշվետվությունը կներկայացվի ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին մինչև հաջորդ տարվա հունիսի 1-ը:

## 2. 2019 Թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի պետական համալսարանի 2019 թվականի դրամական հոսքերը կազմելու են.

1. Եկամուտների գծով՝ 9,117,000.0 հազար դրամ:
2. Ծախսերի գծով՝ 9,789,000.0 հազար դրամ:

| Հ / Հ | Հոդված  | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------|---|-------------------------|
| 1.    | Դրամական միջոցների մուտքերի<br>(եկամուտների) գծով                     | 9,117,000.0             |
| 2.    | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի)<br>գծով                           | 9,789,000.0             |
| 3.    | Դեֆիցիտ (դրամական միջոցների ելքերի<br>գերազանցումը մուտքերի նկատմամբ) | 672,000.0               |

ԵՊՀ 2019 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը դեֆիցիտային է, իսկ դեֆիցիտի լրացման աղբյուրը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված ԵՊՀ դրամական միջոցների մնացորդն է:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2019 Թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՅԱՇԻՎ

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)


| I   |   | Հոլում     | Գումարը<br>(հազար դրամ) |
|-----|---|------------|-------------------------|
| Հ/Հ | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ |            |                         |
|     | <b>Ընդամենը</b>                                     |            | <b>9,117,000.0</b>      |
|     | <b>այդ թվում՝</b>                                   |            |                         |
| 1.  | Գործառնական գործունեությունից եկամուտներ            |            | 8,277,000.0             |
|     | <b>այդ թվում՝</b>                                   |            |                         |
| 1.1 | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից      | Հավելված 1 | 5,342,000.0             |
| 1.2 | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից | Հավելված 2 | 2,935,000.0             |
| 2.  | Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ          | Հավելված 3 | 230,000.0               |
| 3.  | Ոչ գործառնական եկամուտներից                         | Հավելված 4 | 610,000.0               |

| II             | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ                                    | Հղում       | Գումարը<br>(հազար դրամ) |
|----------------|--|-------------|-------------------------|
| Հ/Հ            |  |             |                         |
| Ընդամենը       |  |             | 9,789,000.0             |
| այդ թվում՝     |  |             |                         |
| Ընթացիկ ծախսեր |  |             | 9,096,000.0             |
| այդ թվում՝     |  |             |                         |
| 1.             | Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր | Հավելված 5  | 6,732,000.0             |
| 2.             | Կրթաթոշակի ծախսեր  | Հավելված 6  | 206,000.0               |
| 3.             | Վճարումներ պետական բյուջե  | Հավելված 7  | 280,000.0               |
| 4.             | Կոմունալ վճարների ծախսեր   | Հավելված 8  | 305,000.0               |
| 5.             | Փոստային և կապի վճարների ծախսեր  | Հավելված 9  | 24,000.0                |
| 6.             | Գրասենյակային ծախսեր   | Հավելված 10 | 32,000.0                |
| 7.             | Ապրանքանյութական պաշարների ծախսեր  | Հավելված 11 | 137,000.0               |
| 8.             | Տրանսպորտային ծախսեր   | Հավելված 12 | 52,000.0                |
| 9.             | Ծառայությունների ձեռքբերման ծախսեր   | Հավելված 13 | 586,500.0               |
| 10.            | Ներկայացուցչական ծախսեր  |             | 10,000.0                |
| 11.            | Անդամավճարների ծախսեր  |             | 11,000.0                |

|                   |   |             |           |
|-------------------|---|-------------|-----------|
| 12.               | Վարձակալության ծախսեր                       | Հավելված 14 | 31,500.0  |
| 13.               | Գործուղման ծախսեր                           | Հավելված 15 | 180,000.0 |
| 14.               | Նպատակային ֆինանսավորումների ծախսեր         | Հավելված 16 | 230,000.0 |
| 15.               | Գրադարանային ծախսեր                         | Հավելված 17 | 50,000.0  |
| 16.               | ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր | Հավելված 18 | 142,000.0 |
| 17.               | Այլ ծախսեր                                  | Հավելված 19 | 87,000.0  |
| Ոչ ընթացիկ ծախսեր |   |             | 693,000.0 |
| այդ թվում՝        |   |             |           |
| 18.               | Ոչ ընթացիկ ակտիվների ծախսեր                 | Հավելված 20 | 293,000.0 |
| 19.               | Հիմնանորոգման ծախսեր                        | Հավելված 21 | 400,000.0 |

ԵՊՀ ռեկտորի իրավասության շրջանակներում է 2018 թվականի նախահաշվի կատարման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ելքային (ծախսային) հոդվածների միջև կատարել վերաբաշխում՝ դրանց 10 տոկոսի սահմաններում, բացի աշխատավարձի և կրթաթոշակի հոդվածներից:

ԵՊՀ ռեկտոր



Ա. Սիմոնյան

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՇՎԻ  
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

| Հավելված 1 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Հ/Հ        | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ |                         |
| 1.1        | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից         | 5,342,000.0             |
| այդ թվում՝ |   |                         |
| 1.1.1      | Բակալավրիատի ուսուցման ծառայությունից               | 3,674,800.0             |
| այդ թվում՝ |   |                         |
| 1.1.1.1    | ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից           | 3,583,100.0             |
| 1.1.1.2    | Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից   | 91,700.0                |
| 1.1.2      | Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից            | 590,900.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 1.1.2.1    | ՀՀ քաղաքացիներին մատուցված ծառայությունից           | 575,200.0               |
| 1.1.2.2    | Օտարերկրյա քաղաքացիներին մատուցված ծառայությունից   | 15,700.0                |
| 1.1.3      | Ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից             | 37,000.0                |
| 1.1.4      | Հեռակա ուսուցման ծառայությունից                     | 1,039,300.0             |
| այդ թվում՝ |   |                         |
| 1.1.4.1    | Բակալավրիատի ուսուցման ծառայությունից               | 832,300.0               |
| 1.1.4.2    | Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից            | 207,000.0               |



| Հավելված 2 |  | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|--|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ  |                         |
| 1.2        | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից  | 2,935,000.0             |
| այդ թվում՝ |  |                         |
| 1.2.1      | Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից  | 1,973,000.0             |
| այդ թվում՝ |  |                         |
| 1.2.1.1    | Բարձրագույն կրթության ծառայությունից   | 1,710,200.0             |
| 1.2.1.2    | Հետբուհական կրթության ծառայությունից   | 120,600.0               |
| 1.2.1.3    | ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձրագույն կրթական ծառայությունից  | 142,200.0               |
| 1.2.2      | Գիտական և գիտատեխնիկական գործունեությունից   | 923,000.0               |
| այդ թվում՝ |  |                         |
| 1.2.2.1    | Դրամաշնորհային (թեմատիկ), բազային լաբորատորիաների, հիմնարար և կարևորագույն, միջազգային համագործակցության ծրագրերից   | 759,700.0               |
| 1.2.2.2    | Հավելավճարներ գիտաշխատողներին գիտական աստիճանների և բարձր արդյունավետություն ցուցաբերելու համար, բարձրագույն որակավորման հանձնաժողովից (ԲՈՂ) ստացվող գումարներից | 150,000.0               |
| 1.2.2.3    | Գիտական գործուղումների և գիտաժողովների ծրագրերից   | 4,000.0                 |
| 1.2.2.4    | Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրից   | 9,300.0                 |
| 1.2.3      | Այլ գործունեությունից  | 39,000.0                |
| այդ թվում՝ |  |                         |
| 1.2.3.1    | ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրերով   | 15,000.0                |
| 1.2.3.2    | «Կիրառական հետազոտություններ» ծրագրով  | 1,600.0                 |
| 1.2.3.3    | Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծրագրով (Վեներտիկ)   | 11,304.0                |
| 1.2.3.4    | Պրահայի «Կառլով»-ի համալսարանում հայոց լեզվի դասավանդման ծրագրով   | 5,696.0                 |
| 1.2.3.5    | Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման ծրագրով   | 1,800.0                 |
| 1.2.3.6    | Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծրագրով (Ավստրիա, Զալցբուրգ)   | 3,600.0                 |

| Հավելված 3 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ       |                         |
| 2.         | Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ                | 230,000.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 2.1        | Եկամուտներ լրացուցիչ կրթական ծառայություններից            | 74,000.0                |
| 2.2        | Եկամուտներ ուսումնասարտադրական բազաների ծառայություններից | 30,000.0                |
| այդ թվում՝ |   |                         |
| 2.2.1      | Ծաղկածորի ուսումնասարտադրական բազայի գործունեությունից    | 30,000.0                |
| 2.2.2      | Հանքավանի ուսումնասարտադրական բազայի գործունեությունից    | 0.0                     |
| 2.2.3      | Բյուրականի ուսումնասարտադրական բազայի գործունեությունից   | 0.0                     |
| 2.2.4      | Դիլիջանի մարզաառողջարանի գործունեությունից                | 0.0                     |
| 2.3        | Եկամուտներ հյուրերի տան ծառայություններից                 | 15,000.0                |
| 2.4        | Վարձակալներին մատուցվող ծառայություններից                 | 14,000.0                |
| 2.5        | Եկամուտներ մարզասրահի ծառայություններից                   | 46,000.0                |
| 2.6        | Եկամուտներ ընդունելության քննությունների կազմակերպումից   | 6,000.0                 |
| 2.7        | Եկամուտներ փաստաթղթերի ձևակերպումներից                    | 5,000.0                 |
| 2.8        | Եկամուտներ քննությունների կազմակերպումից                  | 30,000.0                |
| 2.9        | Այլ եկամուտներից  | 10,000.0                |
| այդ թվում՝ |   |                         |
| 2.9.1      | Դուրս գրված գույքի օտարումից                              | 2,000.0                 |
| 2.9.2      | Հանրակացարանային ծառայություններից                        | 5,000.0                 |
| 2.9.3      | Այլ եկամուտներից  | 3,000.0                 |

| Հավելված 4 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ               |                         |
| 3.         | Ոչ գործառնական եկամուտներից                                       | 610,000.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 3.1        | Դրամաշնորհային ծրագրերից  | 410,000.0               |
| 3.2        | Եկամուտներ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից | 180,000.0               |
| 3.3        | Բարեգործական եկամուտներից   | 20,000.0                |

| Հավելված 5 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ   |                         |
| 1.         | Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր              | 6,732,000.0             |
| այդ թվում՝ |   |                         |
| 1.1        | Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդհանուր ծախսեր, այդ թվում՝                                  | 4,072,000.0             |
| 1.1.1      | Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական աշխատանքի վարձատրության ծախսեր                       | 3,413,000.0             |
| 1.1.2      | Ժամավճարային հիմունքով աշխատանքի վարձատրության ծախսեր   | 135,000.0               |
| 1.1.3      | Լրավճարներ պրոֆեսորադասախոսական և այլ անձնակազմի աշխատակիցներին հեռակա ուսուցման եկամուտներից | 324,000.0               |
| 1.1.4      | Լրավճար գիտակրթական գործունեության համար  | 200,000.0               |

|   |   |             |
|---|---|-------------|
| 1.2   | Վարչական անձնակազմի ծախսեր  | 468,000.0   |
| 1.3   | Ուսումնասօժանդակ անձնակազմի ծախսեր                                    | 462,000.0   |
| 1.4   | Սպասարկող և այլ անձնակազմի ծախսեր                                     | 550,000.0   |
| 1.5   | Գիտական գործունեության անձնակազմի ծախսեր                              | 795,000.0   |
| 1.6   | Դրամաշնորհային և լրացուցիչ կրթական ծրագրերի մասնակիցների ծախսեր       | 293,000.0   |
| 1.7   | Պայմանագրային (միանվագ) աշխատանքների վարձատրության ծախսեր             | 60,000.0    |
| 1.8   | Հավելավճարներ հաշմանդամության կարգ ունեցող ԵՊՀ աշխատակիցներին         | 12,000.0    |
| 1.9   | Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր                            | 20,000.0    |
| Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարումների ծախսերում ներառված են. |   |             |
| ա.  | Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող եկամտային հարկը     | 1,680,000.0 |
| բ.  | Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող սոցիալական վճարը    | 86,000.0    |
| գ.  | Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող դրոշմանիշային վճարը | 30,000.0    |

|            |  |                         |
|------------|--|-------------------------|
| Հավելված 6 |  | Գումարը<br>(հազար դրամ) |
| Հ/Հ        | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ                                    |                         |
| 2.         | Կրթաթոշակի ծախսեր  | 206,000.0               |
| այդ թվում՝ |  |                         |
| 2.1        | Կրթաթոշակ բակալավրիատի ուսանողներին  | 90,000.0                |
| 2.2        | Կրթաթոշակ մագիստրատուրայի ուսանողներին   | 46,000.0                |
| 2.3        | Կրթաթոշակ ասպիրանտներին  | 27,000.0                |
| 2.4        | Անվանական կրթաթոշակ  | 15,000.0                |
| 2.5        | Կրթաթոշակ դրամաշնորհային ծրագրերի և լրացուցիչ կրթական դասընթացների մասնակիցներին | 28,000.0                |

| Հավելված 7 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 3.         | Վճարումներ պետական բյուջե                     | 280,000.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 3.1        | Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ            | 280,000.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 3.1.1      | Շահութահարկ                                   | 250,000.0               |
| 3.1.2      | Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)                   | 10,000.0                |
| 3.1.3      | Այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ        | 20,000.0                |

| Հավելված 8 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 4.         | Կոմունալ վճարների ծախսեր                      | 305,000.0               |
| այդ թվում՝ |   |                         |
| 4.1        | Էլեկտրաէներգիայի ծախսեր                       | 140,000.0               |
| 4.2        | Գազի ծախսեր                                   | 130,000.0               |
| 4.3        | Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր          | 25,000.0                |
| 4.4        | Կոմունալ այլ վճարների ծախսեր                  | 10,000.0                |

| Հավելված 9 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|------------|---|-------------------------|
| Դ/Դ        | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 5.         | Փոստի և կապի վճարների ծախսեր                  | 24,000.0                |
| այդ թվում՝ |   |                         |
| 5.1        | Հեռախոսակապի ծախսեր                           | 11,000.0                |
| 5.2        | Ինտերնետ կապի ծախսեր                          | 11,000.0                |
| 5.3        | Փոստային ծախսեր                               | 2,000.0                 |

| Հավելված 10 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 6.          | Գրասենյակային ծախսեր                          | 32,000.0                |
| այդ թվում՝  |   |                         |
| 6.1         | Գրենական պիտույքների ծախսեր                   | 24,000.0                |
| 6.2         | Քարթրիջներ և դրանց լիցքավորման ծախսեր         | 8,000.0                 |

| Հավելված 11 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 7.          | Ապրանքանյութական պաշարների ծախսեր             | 135,000.0               |
| այդ թվում՝  |   |                         |
| 7.1         | Շինանյութեր                                   | 15,000.0                |
| 7.2         | Տնտեսական ապրանքներ                           | 15,000.0                |
| 7.3         | Սննդային ապրանքներ                            | 38,000.0                |
| 7.4         | Համակարգչային պարագաներ                       | 5,000.0                 |
| 7.5         | Լամպեր և լուսարձակներ                         | 6,000.0                 |
| 7.6         | Տպագրական նյութեր                             | 5,000.0                 |
| 7.7         | Փափուկ գույք                                  | 10,000.0                |
| 7.8         | Քիմիական, լաբորատոր նյութեր և պարագաներ       | 20,000.0                |
| 7.9         | Մարզական գույք                                | 3,000.0                 |
| 7.10        | Դեղորայք                                      | 1,500.0                 |
| 7.11        | Գործիքներ                                     | 1,500.0                 |
| 7.12        | Այլ ապրանքներ                                 | 15,000.0                |

| Հավելված 12 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 8.          | Տրանսպորտային ծախսեր                          | 52,000.0                |
| այդ թվում՝  |   |                         |
| 8.1         | Վառելիքի և քայուղի ծախսեր                     | 20,000.0                |
| 8.2         | Ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի ծախսեր     | 7,000.0                 |
| 8.3         | Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր | 25,000.0                |

| Հավելված 13 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ       |                         |
| 9.          | Ծառայությունների ձեռքբերման ծախսեր                  | 586,000.0               |
| այդ թվում՝  |   |                         |
| 9.1         | Տպագրական ծառայություններ                           | 50,000.0                |
| 9.2         | Գույքի նորոգման և սպասարկման ծառայություններ        | 6,000.0                 |
| 9.3         | Ցուցանակների պատրաստման ծառայություններ             | 2,000.0                 |
| 9.4         | Գովազդի (հայտարարությունների) ծառայություններ       | 3,500.0                 |
| 9.5         | Որակավորման բարձրացման դասընթացների ծառայություններ | 6,500.0                 |



|      |   |           |
|------|---|-----------|
| 9.6  | Փաստաթղթերի արխիվացման ծառայություններ  | 1,000.0   |
| 9.7  | Ասպիրանտուրայի դիմորդների դասընթացների, «TOEFL» քննության կազմակերպման ծառայություններ  | 13,000.0  |
| 9.8  | Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ  | 22,000.0  |
| 9.9  | Աշխատողների առողջության ապահովագրության ծրագիր  | 140,000.0 |
| 9.10 | Տրանսպորտային միջոցների ապահովագրության ծառայություն (ԱՊՊԱ)   | 1,000.0   |
| 9.11 | Մասնագիտական և մանկավարժական պրակտիկայի ծառայություններ   | 17,000.0  |
| 9.12 | Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հյուրասիրությունների կազմակերպման ծառայություններ   | 47,000.0  |
| 9.13 | Չափագրումների, հեղինակային և տեխնիկական հսկողությունների, նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայություններ | 20,000.0  |
| 9.14 | Հակահրդեհային միջոցառումների մասնագիտական ծառայություններ   | 1,000.0   |
| 9.15 | Բանկային և մաքսային ձևակերպումների ծառայություններ  | 5,000.0   |
| 9.16 | Տեսանյութերի, ֆիլմերի նկարահանման և մոնտաժման ծառայություններ   | 5,000.0   |
| 9.17 | Սանմաքրման ծառայություններ  | 141,000.0 |
| 9.18 | Անվտանգության պահպանման ծառայություններ   | 87,000.0  |
| 9.19 | Այլ ծառայություններ   | 18,500.0  |

| Հավելված 14 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ                                   |                         |
| 12.         | Վարձակալության ծախսեր   | 31,500.0                |
| այդ թվում՝  |   |                         |
| 12.1        | Սրահների և հյուրատների վարձակալության ծախսեր                                    | 23,000.0                |
| 12.2        | Տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալության ծախսեր | 8,500.0                 |

| Հավելված 15 |  | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|--|-------------------------|
| Դ/Դ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ  |                         |
| 13.         | Գործուղման ծախսեր  | 180,000.0               |
| այդ թվում՝  |  |                         |
| 13.1        | Ֆակուլտետների, կենտրոնների, ինստիտուտի և համահամալսարանական ամբիոնների գործուղման ծախսեր   | 29,000.0                |
| 13.2        | Վարչական և այլ անձնակազմի գործուղման ծախսեր  | 10,000.0                |
| 13.3        | Միջազգային օլիմպիադաների մասնակցության, արշավների և ուսանողական այլ գործուղումների ծախսեր  | 23,000.0                |
| 13.4        | ԵՏՄ անդամ պետությունների համալսարանների և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ուսուցման և միջազգային համագործակցության խթանմանն ուղղված գործուղումների նպատակով ծախսեր | 11,000.0                |
| 13.5        | Գիտական գործունեությամբ նախատեսված գործուղման ծախսեր   | 37,000.0                |
| 13.6        | Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսեր  | 70,000.0                |

| Հավելված 16 |  | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|--|-------------------------|
| Յ/Յ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ    |                         |
| 14.         | Նպատակային ֆինանսավորումներ                      | 230,000.0               |
| այդ թվում՝  |  |                         |
| 14.1        | Համաֆինանսավորման ծախսեր                         | 40,000.0                |
| 14.2        | Ֆինանսավորումներ գործընկեր կազմակերպություններին | 190,000.0               |

| Հավելված 17 |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|-------------|---|-------------------------|
| Յ/Յ         | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ                   |                         |
| 15.         | Գրադարանային ծախսեր   | 50,000.0                |
| այդ թվում՝  |   |                         |
| 15.1        | Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության ծախսեր                    | 1,500.0                 |
| 15.2        | Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրության ծախսեր               | 15,000.0                |
| 15.3        | ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված գրքերի ձեռքբերման ծախսեր | 10,000.0                |
| 15.4        | Այլ հեղինակներից գրքերի ձեռքբերման ծախսեր                       | 23,500.0                |


| Հավելված 18. |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|--------------|---|-------------------------|
| Դ/Դ          | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ   |                         |
| 16.          | ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր   | 142,000.0               |
| այդ թվում՝   |   |                         |
| 16.1         | Ուսանողական նպաստների ծախսեր  | 95,000.0                |
| 16.2         | «Պատիվ ունեն» ծրագրին մասնակից և արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձերի լրիվ փոխհատուցման ծախսեր | 3,900.0                 |
| 16.3         | Սոցիալապես անապահով և սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում             | 34,500.0                |
| 16.4         | Կրթաթոշակի ծախսեր   | 8,600.0                 |

| Հավելված 19. |  | Գումարը<br>(հազար դրամ) |
|--------------|--|-------------------------|
| Դ/Դ          | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ  |                         |
| 17.          | Այլ ծախսեր   | 87,000.0                |
| այդ թվում՝   |  |                         |
| 17.1         | Հայաստան համահայկական հիմնադրամի հետ համագործակցության ծախսեր                                | 5,000.0                 |
| 17.2         | Ֆինանսական աջակցության ԵՊՀ հրատարակչությանը  | 16,000.0                |
| 17.3         | Բարեգործական ծախսեր  | 5,000.0                 |
| 17.4         | Մշակութային միջոցառումների տոմսերի ձեռքբերման ծախսեր   | 2,500.0                 |
| 17.5         | Ֆինանսական աջակցություն 2016թ. ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների երեխաներին | 18,500.0                |
| 17.6         | Պահուստային ֆոնդ   | 30,000.0                |
| 17.7         | Այլ ծախսեր   | 10,000.0                |

| Հավելված 20. |   | Գումարը<br>(հազար դրամ) |
|--------------|---|-------------------------|
| Դ/Դ          | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ |                         |
| 18.          | Ոչ ընթացիկ ակտիվների ծախսեր                   | 293,000.0               |
| այդ թվում՝   |   |                         |
| 18.1         | Համակարգչային գույքի ձեռքբերման               | 60,000.0                |
| 18.2         | Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման          | 120,000.0               |
| 18.3         | Կահույքի ձեռքբերման                           | 55,000.0                |
| 18.4         | Օդորակիչների ձեռքբերման                       | 8,000.0                 |
| 18.5         | Հուշամեդալների և շքանշանների ձեռքբերման       | 1,000.0                 |
| 18.6         | Հակահրդեհային գույքի ձեռքբերման               | 5,000.0                 |
| 18.7         | Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման             | 6,000.0                 |
| 18.8         | Տպագրական սարքավորումների ձեռքբերման          | 6,000.0                 |
| 18.9         | Կենցաղային գույքի ձեռքբերման                  | 10,000.0                |
| 18.10        | Տեսահսկման համակարգ                           | 7,000.0                 |
| 18.11        | Ոչ ընթացիկ այլ ակտիվների ձեռքբերման           | 15,000.0                |


| Հավելված 21. |  | Գումարը<br>(հազար դրամ) |
|--------------|--|-------------------------|
| Զ/Զ          | Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ  |                         |
| 19.          | Հիմնանորոգման ծախսեր   | 400,000.0               |
| այդ թվում՝   |  |                         |
| 19.1         | Ուսումնական մասնաշենքերի, լաբորատորիաների, դահլիճների և գրադարանի հիմնանորոգման ծախսեր | 280,000.0               |
| 19.2         | Գիտական լաբորատորիաների հիմնանորոգման ծախսեր   | 100,000.0               |
| 19.3         | Ընդհանուր օգտագործման տարածքների, համակարգերի, ցանկապատերի և այլ նորոգման ծախսեր       | 20,000.0                |

ԵՊՀ ռեկտոր




Ա. Սիմոնյան

ԵՊՀ 2019Թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ) ՀՈԴԿԱԾՆԵՐ  
ԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ.




### ԵՊՀ 2019 թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ) ՀՈԴԿԱԾՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ







ԵՊՀ 2019 թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ) ՀՈԴԿԱԾՆԵՐ  
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ



ԵՊՀ 2019 թ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ) ՀՈԴԿԱԾՆԵՐ  
